էին թուրք խանների և աղալարների ձեռքը։ Հիմնվելով իր ունեցած հին վավերաթղթերի վրա նա հաջողությամբ վերականգնում էր իր հին իրավունքները։

Հայ մելիքներն ու բեկերը համեմատաբար արագ և դյուրին կարողացան ապացուցել հողերի վրա իրենց ունեցած սեփականատիրական իրավունքը և ճշտել այդ հողերի սահմանները։ Այդ այնքան էլ հեշտ չէր թուրք բեկերի և վանքի և հայ եկեղեցու համար։ Վեճերը տևեցին երկար տարիներ։ 1895 թ. Զելինսկու[16] կատարած հետազոտությունը ցույց տվեց, որ միայն արքունիքի դեմ վիճելի հողերի համար սկսված էր 29 դատ, որոնցից՝

Տաթևի վանքի կողմից՝ 5,

Ղարաբաղի հայ-լուսավորչական կոնսիստորիայից՝ 1,

մնացած 23 դեպքերում պահանջողները թուրք բեկերն ու աղաներն էին։

Հողային վեճերը առավել ևս բազմաթիվ էին և մասնավոր անհատների միջև։ Դատական գործերն անցնում էին սերնդե-սերունդ և շատերը դեռ չէին վերջացել հեղափոխության նախօրյակին։ Այդպիսի դատաստանությամբ մեջտեղից վերանում էր հողատիրության այն խճճվածությունը և բարդությունը, որը ռուսական տիրապետությունը ժառանգություն ստացավ նախորդ դարերից։

Հողատիրական իրավունքների ճշտման հետ զուգահեռաբար ընթանում էր նույն և երբեմն ավելի մեծ դժվարությամբ ազնվական ծագման որոշումը։ Դասակարգային կարգերի վրա հիմնված պետության մեջ այդ ծագման հետ շաղկապված էին շատ ռեալ և կոնկրետ արտոնություններ։ Զանգեզուրի թե հայ և թե թուրք մելիքներն ու բեկերը ամեն ջանք էին թափում կայսրության ազնվականության ընդհանուր ցանկի մեջ ցուցակագրվելու համար։ Հայ մելիքների ընտանիքները թեև իրենց ստվար մասով կարողացան ապացուցել իրենց ազնվական ծագումը[17] և մուծվել այդ ցանկի մեջ, սակայն շարունակ ձգձգվեց և մինչև վերջն էլ կասկածի տակ թողնվեց այն հարցը՝ թե արդյո՞ք նրանք, մանավանդ մահալական մելիքները, պետք է վրացական բավադների պես համարվեն հավասար ռուսական կնյազներին (իշխաններին)։ Այդ հարցը այնպես էլ մնաց բաց և դարի վերջին այլևս չարծարծվեց, ազնվականության արտոնությունները նոր տնտեսական-հասարակական պայմանների մեջ արդեն կորցրել էին իրենց ռեալ նշանակությունը։

Այսպես ամբողջ մի դարի ընթացքում Զանգեզուրումն էլ, ինչպես ամենուրեք Անդրկովկասում, կատարվում էր արքունի, մասնավոր և համայնական հողատիրության սահմանորոշում և դրա հետ սերտորեն շաղկապված՝ դասակարգային արտոնությունների և պարտավորությունների բաշխում։ Սակայն դա չէր ազդում պարսկական պատերազմից հետո գավառում հաստատված էթնիկ դասավորության վրա, որը այլևս չէր ենթարկվում փոփոխության։ Բնակչությունը իր բոլոր շերտերով և ազգային կազմով ստացավ իր կայուն տեղաբաշխումը։

Միայն դարի երկրորդ կեսում Զանգեզուրում Որոտանի (Քոչբեկի) լեռնանցքի մոտ, որը տանում է Սիսիանից դեպի Հայոցձոր (Դարալագյազ), տեղավորվեց մի ռուսական գյուղ՝ Բորիսովկա՝ Բաղարչայ, հաջորդական

---

[16] Նույն տեղում, էջ 39—40։

[17] Մելիք-Ստեփանյանները ամեն կերպ աշխատում էին համոզել Մելիք-Փարսադանյաններին իրենց էլ մտցնել նրանց ճյուղագրական ցանկի մեջ և իրենց էլ ցույց տալ որպես այդ Աճանան-Քարհանեցի ազնվական տան մի ճյուղավորություն։